Norwegian Ministry of Foreign Affairs

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

UNDP

Մասնակցային և ներառական գործընթացները համայնքի զարգացման համատեքստում դասընթաց

Թեմա՝ Համայնքային ոլորտային ծառայությունների համանախագծման ՄԱԶԾ փորձը

Դասընթացավար՝ Անուն Ազգանուն,
ՄԱԶԾ փորձագետ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:

Համայնքային ծառայությունների համապատասխանությունը համայնքի խնդիրներին



Համայնքային ծառայություններ

Հանրային բնույթի ծառայություններն այն միջոցառումներն են, որոնք երկրի կառավարությունն իրականացնում է ուղղակիորեն կամ իր կողմից ֆինանսավորվող կազմակերպությունների միջոցով՝ իր իրավասության տակ գտնվող հարցերում հանրության պահանջմունքները բավարարելու նպատակով:



Հանրային ծառայողների օր

2003 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց բանաձև, ըստ որի հունիսի 23-ը հռչակվեց ՄԱԿ-ի հանրային ծառայության օր:

Համայնքային ծառայություններ

Հանրային բնույթի ծառայությունների այն տեսակները, որոնց մատուցման կազմակերպումը օրենքով վերապահված է ՏԻՄ-երին, անվանում են համայնքային ծառայություններ: Ուստի, համայնքային ծառայությունների պատշաճ մատուցման կազմակերպումը հանդիսանում է ՏԻՄ-երի հիմնական խնդիրներից մեկը:

Յուրաքանչյուր տարի բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների առաջնահերթությունների որոշումը յուրաքանչյուր համայնքի ՏԻՄ-եր կարող են յուրովի կայացնել՝ ելնելով համայնքի բնակչության կարիքներից և պահանջմունքներից, համայնքի սոցիալ-տնտեսական պայմաններից, համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների առկայությունից և վիճակից, ինչպես նաև համայնքի այլ առանձնահատկություններից:

ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը առաջնահերթ պետք է մատուցվեն օրենքով նրանց վերապահված այն ծառայությունները, որոնց համար առկա են համայնքի սեփականություն համարվող համապատասխան ենթակառուցվածքներ: Դրանց պահպանումը, շահագործումն ու կենսունակության ապահովումը պահանջում է ամենամյա համապատասխան ֆինանսական միջոցների հատկացում:

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝

4) հաստատում է համայնքի զարգացման ծրագրերը.

4.1) հաստատում է համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունները.

4.3) համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով).

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

5) հաստատում է միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները, բյուջեն, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.
7) սահմանում է համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ.
9) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված *18.* Համայնքի ավագանու լիազորությունները

12) որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ստեղծելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին՝ այլ համայնքների հետ միավորվելով նոր համայնք ձևավորելու վերաբերյալ.

15) օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին.

17) օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն դրանց կազմի թվի կեսից պակաս.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված *18.* Համայնքի ավագանու լիազորությունները

18) օրենքով սահմանված դեպքերում սահմանում է **տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.**

18.1) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատում է այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները.

19) սահմանում է համայնքի կողմից մատուցվող **ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը**.

20) իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորություններ.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

28) համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի, համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները, կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ:

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

29) որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին՝ «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

30) օրենքով սահմանված դեպքերում հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը.

31) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով որոշում է ընդունում համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու մասին.

32) հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

38) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը **բնակիչների մասնակցության կարգը** հաստատելու վերաբերյալ.

39) քննարկում և որոշում է կայացնում **համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը** հաստատելու վերաբերյալ.

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված 18. Համայնքի ավագանու լիազորությունները

40) սահմանում է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները.

40.1) սահմանում է առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող օբյեկտներում, ըստ դրանց գտնվելու վայրերի, առևտրի և ծառայությունների բնագավառում գործունեություն իրականացնող անձանց կողմից լռությունը կամ գիշերային անդորրն ապահովելու ժամերը (22.00-ից մինչև 7.00-ն, 23.00-ից մինչև 7.00-ն և 24.00-ից մինչև 7.00-ն).

41) սահմանում է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 103-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքային համայնքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք

Հոդված *18.* Համայնքի ավագանու լիազորությունները

41.6) սահմանում է մշակութային գործունեության իրականացման նպատակով քաղաքային բնակավայրերի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները.

42) իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք

Հոդված 8. Տեղական տուրքերի և վճարների տեսակների սահմանումը

1. Տեղական տուրքերի տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով:

2. Տեղական վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը սահմանվում են սույն օրենքով, ինչպես նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ սահմանելով սույն օրենքի տեղական վճարների տեսակների մեջ չներառված տեղական վճարների նոր տեսակներ և դրանց դրույքաչափերը:

3. Համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրույքաչափերի շրջանակներում սահմանում է տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրանց դրույքաչափերը:

4. Համայնքի ավագանին սահմանում է նաև այն դեպքերը, երբ կարող է մերժվել սույն օրենքով սահմանված թույլտվությունների տրամադրումը կամ գործողությունների կատարումը (վավերացումը):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 136

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Արենի համայնքի ավագանին *որոշում է.*

Սահմանել Արենի համայնքի տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն սույն որոշման հավելվածի՝ կազմված 5 էջից :

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք

13. Տեղական վճարների դրույքաչափերի սահմանումը

1. Տեղական վճարների դրույքաչափերը սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ, **համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ**՝ օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված և 8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սահմանվող տեղական վճարների տեսակների համար համայնքի ավագանին սահմանում է փոխհատուցման վճարներ, որոնց դրույքաչափերը համայնքի ղեկավարի ներկայացմամբ յուրաքանչյուր տարի սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ ծառայության համար անհրաժեշտ ծախսերի չափով:

3. **Օրացուցային տարվա համար** ավագանու սահմանած տեղական վճարների **դրույքաչափերը փոփոխության չեն կարող ենթարկվել:**

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«ՀՀ հողային օրենսգիրք»

Հոդված 29. Հողերի օգտագործման սխեմաները

4. **Հողերի օգտագործման սխեմաներն** օրենսդրությամբ սահմանված կարգով **հաստատում է համայնքի ավագանին:**

Հոդված 67. Պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վաճառքն աճուրդով

3. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի կամ դրանց առանձին հատվածների **աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հայտարարում է համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու որոշման հիման վրա:**



Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը

14. Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում

5. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը (այդ թվում՝ վերջիններիս կազմում մշակվող՝ **հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները** և նախագծման առաջադրանքը) համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի ավագանին:

9. Համայնքի ավագանին, հաստատելով **գլխավոր հատակագիծը**, իրավունք է ստանում սույն օրենքով և ՀՀ կառավարության սահմանված կարգով փոխելու հողամասերի նպատակային նշանակությունը՝ գլխավոր հատակագծով նախատեսված ծավալով ու փուլերով:

10. Համայնքի սեփականություն համարվող հողամասերը օտարվում կամ օգտագործման են տրամադրվում համայնքի ավագանու հաստատած ամենամյա և քառամյա (-ամյա) ծրագրերին համապատասխան:



Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը

14. Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը համայնքի վարչական սահմաններում

23. Որպես ինքնուրույն փաստաթուղթ՝ մշակված **գոտիավորման նախագիծը** համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է ավագանին: Եթե այն պարունակում է հաստատված գլխավոր հատակագծով սահմանված պահանջների փոփոխություն, ապա համայնքի ավագանու կողմից գոտիավորման նախագիծը հաստատվում է գլխավոր հատակագծի՝ սույն օրենքին համապատասխան կատարված փոփոխությունները հաստատվելուց հետո:

24. Գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագիծը **մշակվում են համայնքի ավագանու կողմից հաստատված նախագծման առաջադրանքի հիման վրա,** համայնքի ղեկավարի պատվերով՝ քաղաքաշինական փաստաթղթերի մշակման համապատասխան լիցենզիա ունեցող անձանց հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված նախագծային կապալի պայմանագրով:

Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը

Հոդված *14.4* Քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը միկրոռեգիոնալ պլանավորման միջոցով

8. Համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախաձեռնությամբ կարող են հանդես գալ՝

1) համայնքների ավագանիները՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի հետ.

2) Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետը՝ համաձայնեցնելով միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների հետ.

3) կոմիտեն՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետի և միկրոռեգիոնալ միավորի մեջ ընդգրկված համայնքների ավագանիների հետ:



Համայնքի ավագանու լիազորությունները՝ համայնքային ծառայությունների տեսանկյունից

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը

Հոդված 17. Քաղաքաշինական փաստաթղթերը

4. Քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման, այսուհետ՝ տարածական պլանավորման) փաստաթղթեր են՝

գ) Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման ռազմավարական փաստաթուղթ).

դ) քաղաքաշինական գոտիավորման նախագծերը (տեղական մակարդակ՝ տարածական պլանավորման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ).

11. Սույն հոդվածի չորրորդ մասի «գ» և «դ» կետերով սահմանված պարտադիր մշակման ենթակա տարածական պլանավորման փաստաթղթերը մշակվում են տեղական բյուջեի միջոցների հաշվին և հաստատվում են համայնքի ավագանու կողմից՝ սույն օրենքի 14.3 հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան:

Համայնքային ծառայությունների ֆինանսավորումը

Վճարովի ծառայություններ

Վճարներն ապահովում են ՀԾ-ների ինքնածախսածածկում

Մասնակի վճարովի ծառայություններ

Ծախսերը կատարվում են համայնքի բյուջեի և վճարների հաշվին

Անվճար ծառայություններ

Ծախսերը կատարվում են համայնքի բյուջեի հաշվին

Պատվիրակված լիազորություններով սահմանված ՀԾ-ներ

Ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեի հաշվին

Համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը

Հոդված 27. Համայնքների բյուջեների ձևավորման սկզբունքները

Համայնքների բյուջեների ձևավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու ընդունած՝ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը.
բ) պահուստային ֆոնդի ստեղծումը՝ որպես տվյալ տարվա համայնքի բյուջեում չնախատեսված, ինչպես նաև վարկերի և այլ փոխառու միջոցների օգտագործման վճարների (տոկոսների) գծով ելքերի աղբյուրի և կապիտալ ելքերի ֆինանսավորման հիմնական երաշխիք.
գ) համայնքի բյուջեի հաշվեկշռվածությունը՝ յուրաքանչյուր տարվա համայնքի բյուջեի սույն օրենքի 28-րդ հոդվածում նշված յուրաքանչյուր բաղկացուցիչ մասում նախատեսված հաշվարկային-դրամարկղային ելքերի հանրագումարը չպետք է գերազանցի համայնքի բյուջեի համապատասխան մասում տվյալ տարում նախատեսված հաշվարկային-դրամարկղային մուտքերի հանրագումարին.
դ) խնայողականությունը, երբ կատարված ծախսին համապատասխանում է դրան համարժեք նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում.
ե) արդյունավետությունը, երբ ապահովվում է կատարված ծախսի և համայնքի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը.
զ) հավաստիությունը և հստակությունը, որը հնարավորություն է ընձեռում ապահովել բյուջեի կատարման և բյուջետային գործընթացի նկատմամբ իրականացվող վերահսկողության արդյունավետությունը՝ բյուջեի հոդվածների հիմքում դրվող հստակ հաշվարկների միջոցով.
է) հրապարակայնությունը, որն ապահովում է համայնքի բյուջեի ձևավորման և կատարման վերաբերյալ համայնքի անդամների իրազեկությունը:

Համայնքների բյուջեների կազմումը քննարկումը և հաստատումը

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը

Հոդված 31.Համայնքի բյուջեի նախագծի կազմումը

1. Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա*:*

2. Համայնքի բյուջեի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը՝ բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքների, բյուջետային դասակարգման, հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա*:*

6. Համայնքի ղեկավարն ամփոփում է սահմանված ձևերով ներկայացված տվյալները և կազմում համայնքի բյուջեի նախագիծը, որը բաղկացած է համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձից և համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծից*:*

8. Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագիծը ներառում է՝

ա) համայնքի բյուջեի եկամուտները և ծախսերը՝ ըստ բյուջեի բաղկացուցիչ մասերի՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ *(*բացառությամբ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման*),*

բ) համայնքի բյուջեի դեֆիցիտը *(*պակասուրդը*)* կամ հավելուրդը և դեֆիցիտի *(*պակասուրդի*)* ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ սույն օրենքով սահմանված դասակարգմամբ,

գ) այլ դրույթներ և ցուցանիշներ, որոնք համայնքի ղեկավարը և ավագանին անհրաժեշտ են համարում համայնքի բյուջեի կատարումը և դրա նկատմամբ վերահսկողությունն ապահովելու համար*:*

Համայնքների բյուջեների կազմումը քննարկումը և հաստատումը

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը

Հոդված 31.Համայնքի բյուջեի նախագծի կազմումը

4. Համայնքի բյուջեի նախագիծը կազմելու աշխատանքները կազմակերպելու նպատակով համայնքի ղեկավարը՝ **աշխատակազմի համապատասխան ծառայությունների և բյուջետային հիմնարկների ղեկավարներին՝**
- տալիս է համապատասխան հրահանգներ բյուջեի մուտքերի և ելքերի հաշվարկման ու ներկայացման համար.
- պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով սույն օրենքի *21*-րդ հոդվածում նշված՝ տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներն ստանալու օրվանից մեկ շաբաթվա ընթացքում ապահովում է բյուջետային մուտքերի և ելքերի հաշվարկման համապատասխան ձևերով:

5. Բյուջետային հիմնարկները համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամկետում համայնքի ղեկավարին են ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտերը, իրենց պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համապատասխան հիմնավորումներով:

Համայնքների բյուջեների կազմումը քննարկումը և հաստատումը

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը

Հոդված 32. Համայնքի բյուջեի նախագծի քննարկումը և հաստատումը համայնքի ավագանու կողմից

1. Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում: Համայնքի բյուջեի նախագիծն ավագանու անդամներին է ուղարկվում քննարկումից առնվազն մեկ շաբաթ առաջ:

5. Համայնքի բյուջեն հաստատում է համայնքի ավագանին, որի վերաբերյալ ընդունում է համայնքի ղեկավարի ներկայացրած համապատասխան որոշման նախագիծը:

7. Համայնքի ղեկավարը, համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվելուց հետո 3 օրվա ընթացքում, ներկայացնում է համապատասխան մարզպետին:

9. Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում՝ համայնքի ղեկավարը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը: Եթե համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում իր անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով:

Համայնքային ծառայությունների բարելավում և նորարարություն

- Մարդակենտրոն նախագծման նոր գործընթացների միջոցով,
- Ինստիտուցիոնալ նոր կազմավորումների ձեւավորման միջոցով,
- Ծառայությունների մատուցման տեխնոլոգիաների արդիականացման ու նոր մոդելների փորձարկման միջոցով,
- Համայնքային ծառայությունների ոլորտում քաղաքականության առավել փաստարկված օրակարգ ձեւավորելու միջոցով,
- «Մարտահրավեր» նետելով ձեւավորված, կարծր կառուցվածքներին ու համակարգերին, երբ ծառայության հիմքում գլխավորապես առաջարկի գերակայությունն է :

ՄԱԶԾ կողմից փորձարկվող ՀՈԾ-երում նորամուծությունները հիմնված են հետևյալ մոտեցումներից մեկի կամ մի քանիսի վրա՝

ՀՈԾ նորարարությունները հիմնված են հետևյալ մոտեցումներից մեկի կամ մի քանիսի վրա

- Հիմնված են մանրակրկիտ հետազոտությունների վրա
- Ներառական են և հասանելի
- Հավելյալ արժեք են ստեղծում
- Հիմնվում են խելացի լուծումների վրա
- Գեներացնում են ավելին կամ խնայում

Ինչպե՞ս ենք ի հայտ բերել համայնքային ոլորտային ծառայությունները

Գնահատելով թիրախային համայնքների կարողությունները և հետաքրքրությունները

Գնահատելով բնակիչների գոհունակության մակարդակը, կարիքները եւ նախընտրությունները

Չափելով որոշակի ծառայության (ների) համար վճարելու բնակիչների պատրաստակամությունը

Մանրակրկիտ հետազոտության փուլ

Արենի համայնք

Վեց բազմաբնակավայր համայնքներում համայնքային ծառայությունների մատուցումից բնակիչների գոհունակության գնահատում	ՏԻՄ-երի կարողությունների գնահատում	Տնտեսական գնահատում
1.Առաջնահերթություն տալ երիտասարդական ժամանցի կենտրոնների և երիտասարդների ներգրավմանն ուղղված ծրագրերի ստեղծմանը:	1. Մարզական ծառայություններ	1. Ջրամատակարարման և կոյուղու համակարգերի զարգացում, ծառայությունների բարելավում
2. Առաջնահերթություն տալ ջրի հետ կապված ենթակառուցվածքների, մասնավորապես ոռոգման ջրի զարգացմանը:	2 Համայնքապետարանի շենք չկա	2. Ճանապարհների կառուցում և վերանորոգում
3. Առաջնահերթություն տալ համայնքային ճանապարհների, ճանապարհային երթևեկության տարրերի և այլ տեխնիկական միջոցների պատշաճ պահպանմանը, ինչպես նաև համայնքային ճանապարհներին անվտանգ երթևեկության կազմակերպմանը:	3. Երիտասարդական ժամանց-երիտասարդական կենտրոններ չկան	3. Ոռոգման ջրի մատակարարման համակարգի ենթակառուցվածքների զարգացում
	4. Առողջապահական ծառայություն	4. Երիտասարդական ժամանցի կենտրոնների (այդ թվում՝ մշակութային տների, մարզական տարածքների)և երիտասարդների ներգրավմանն ուղղված ծրագրերի ստեղծում

Համանախագծման փուլ

Հարցազրույցներ

Դիտարկումներ

Նախագծման վարժանքներ և Նախագծման խաղեր

Փորձագետների հետ վավերացում

Համանախագծման փուլը ենթադրում է ծառայությունների համանախագծման գործընթաց, որտեղ տարբեր շահագրգիռ կողմեր, այդ թվում ծառայություններ մատուցողները, ծառայություն ստացողները և/ կամ օգտվողներ աշխատում են միասին՝ նախագծելու և զարգացնելու ծառայություններ, որոնք բավարարում են բոլոր մասնակիցների կարիքները:

ՄԱԶԾ-ն աշխատել է առավել արդյունավետ և հասանելի ոլորտային ծառայությունների նախագծման և մատուցման ուղղությամբ՝



ՀԾՀ	5301111111	Հեռախոսահամար*
և փոստ		
Ընտանիքի անդամների փաստացի թիվը	7	Ընտանիքի բոլոր անդամ եկամուտը (ՀՀ դրամ)
Ընտանիքի մեկ անձի հաշվով միջին եկամուտը	2142.86 ՀՀ դրամ	
Հասցե	Ծաղկահովիտ համայնք, Բերքառատ բնակավայր, 4փ, 1նրբ 4տ	
Դիմող	ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Դանկ		Հաշվեհամար
Փից փաստաթղթեր	(146.01 Կբ) (253.64 Կբ) (190.37 Կբ)	
Դիմումի հետ կապված փաստաթղթերը և/կամ խանութումները ստանալ	Ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով	
Դրանցեց	Լաուրա Հովհաննիսյան	
Դիմումի ընթացիկ կարգավիճակը	Դիմումը բավարարվել է 10000 դրամ	

11/08/2023 Վարչական ղեկավար / փոխարինող՝ Մերուժան Մինասյան -ի կողմից տրվել է Դրական եզրակացություն
Պատճառ՝ սոցիալապես ծանր վիճակում է բնակվում, ունի առողջական խնդիրներ հետազոտության գնալու համար չունի համապատասխան

վերջնական օգտատերերի, ծառայություններ մատուցողների և փորձագետների հետ վեր հանելով ծառայության մատուցման հետ կապված կարիքները, լուծումները և ներուժը

վերափոխել առկա լուծումները՝ հիմնվելով բնակիչների վերհանված կարիքների և հետաքրքրությունների վրա

մշակել թվային կառավարման համակարգերը՝ տվյալների մշտական հավաքագրման, հեշտ համակարգման և մշտադիտարկման համար:

Համայնքային ոլորտային ծառայությունների մասնակցային նախագծման մեթոդաբանություն

Նպատակը՝

Գնահատել համայնքում ծառայության կարիքը և հստակեցնել ծառայության մատուցման հնարավոր եղանակները:

Խնդիրները՝

- Նկարագրել թիրախ համայնքներում մատուցվող ծառայությունները,
- Գնահատել թիրախ համայնքների բնակավայրերի բնակիչների գոհունակությունը և ծառայություններից օգտվելու հասանելիությունը, մատչելիությունը,
- Բացահայտել նոր ծառայության կարիքը,
- Համանախագծել նորարարական ծառայության շահագործման հնարավոր ռազմավարությունները,
- Քարտեզագրել նորարարական ծառայության համար համայնքում առկա ռեսուրսները՝ ՏԻՄ-երի մասնագիտական, նյութական և ֆինանսական ռեսուրսները, ենթակառուցվածքները:

Բազմաբնակավայր համայնքներում համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մասնակցային նախագծում

Համանախագծման գործիքներ

- Հարցումներ
- Հարցազրույցներ
- Փորձագետների հետ վավերացում
- Դիտարկումներ
- Նախագծման վարժանքներ
- Նախագծման խաղեր

Մասնակիցների թիվը՝

Կին՝

Տղամարդ՝

Խոցելի խմբեր՝

Ինչպե՞ս ենք իրականացնում համայնքային ոլորտային ծառայությունների մասնակցային նախագծումը

Հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների ժամանակ շահառուների կողմից առաջարկվել են ծառայության մատուցման սցենարներ (User scenario)

Մոդելավորվում են տարբեր իրավիճակներ

Ինչպես կարող է նոր ծառայությունը բարելավել բնակիչների փորձառությունը

Քարտեզագրում՝ ծառայություն ստացողները և ծառայություն մատուցողները նկարում են քարտեզի վրա

Lego serious play տեխնիկա. նոր ծառայության քննարկում և փորձարկում

Մշակած սցենարները քննարկվում են փորձագիտական խմբի հետ

ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու համակարգի մասնակցային նախագծում

- Հաշվի են առնվել նպաստառու ընտանիքների, օգնության դիմած, բայց չստացած ընտանիքների, օգնությունից երբևէ օգտված ընտանիքների, համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատողների, վարչական ղեկավարների, սոցիալական աշխատողի, ԱՍՀՆ մասնագետների, ծրագրավորողների կարծիքները:

«1 մլն. դրամ վարկ եմ վերցրել...հիմարության համար՝ հայրս մահացավ, մայրս մահացավ, զոքանչս մահացավ, երեխաներիս ամուսնացրեցի: Հիմա գազ չենք կարողանում միացնել:»
Համայնքի անապահով բնակիչ



- Դիմելու ձևի և չափորոշիչների վերաբերյալ համայնքի բնակիչների **իրազեկման ընդհանրական մեխանիզմի բացակայություն**
- Տրամադրվող **ֆինանսական աջակցության չափի հաշվարկը հստակ չէ**:
- **Համայնքի ղեկավարը և վարչական ղեկավարները դժվարանում են մերժել սոցիալական աջակցության համար դիմած բնակիչներին**



Սոցիալական աջակցության դիմում N 42

Դիմումի Գրանցման ամսաթիվը*	09/08/2023	Ծածկագիր
Սոցիալական աջակցության նպատակը	Դեղորայքի գնում (Դրամային աջակցության բազային արժեքը կազմում է 20000 ՀՀ դրամ)	
Անուն Ազգանուն Հայրանուն	ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԱՇԱՐԻ	
ՀԾՀ	5301111111	Հեռախոսահամար*
Էլ փոստ		
Ընտանիքի անդամների փաստացի թիվը	7	Ընտանիքի բոլոր անդամ եկամուտը (ՀՀ դրամ)
Ընտանիքի մեկ անձի հաշվով միջին եկամուտը	2142.86 ՀՀ դրամ	
Հասցե	Ծաղկահովիտ համայնք, Բերքառատ բնակավայր, 4փ, 1նրբ 4տ	
Դիմող	ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ	
Բանկ		Հաշվեհամար
Փոց փաստաթղթեր	(146.01 Կբ) (253.64 Կբ) (190.37 Կբ)	
Դիմումի հետ կապված փաստաթղթերը և/կամ նանուցումները ստանալ	Ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով	
Գրանցեց	Լաուրա Հովհաննիսյան	
Դիմումի ընթացիկ կարգավիճակը	Դիմումը բավարարվել է 10000 դրամ	

11/08/2023 Վարչական ղեկավար / փոխարինող՝ Մերուժան Մինասյան -ի կողմից տրվել է Դրական եզրակացություն
Պատճառ՝ սոցիալապես ծանր վիճակում է բնակվում, ունի առողջական խնդիրներ հետազոտության գնալու համար չունի համապատասխան մ

10/08/2023 Համայնքի սոց. աշխատողի՝ Սիրուն Կարապետյան -ի կողմից տրվել է Դրական եզրակացություն

11/08/2023 15:24:28 Ինքնաշխատ գնահատման համակարգ - **Առաջարկվում է բավարարել դիմումը**
քանի որ ըստ Ընտանիքի գնահատման **թերթիկի** Դիմումատուն Կարող է մասամբ հոգալ սեփական կարիքները

տրամադրել սոց օգնություն 10000 ՀՀ դրամ, որը հավասար է 20000*0.5

Ավանդական, թե՞ նորարար

- Ներդրվող համակարգը առավել թափանցիկ է
- Առկա են դրական կամ բացասական եզրակացության հիմնավորումներ
- Հստակեցվել է ֆինանսական աջակցության չափի հաշվարկը

Օգտակար հղումներ

Համայնքի ավագանուն ՀՀ սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված լիազորություններին կարող եք առավել մանրամասն ծանոթանալ՝

Աղբյուրի անվանումը	Անցնելով հղմամբ՝	Սկանավորելով QR կոդը
ՀՀ հողային օրենսգիրք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=172330	
«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=187311	
«Տեղական ինքնակառավարման» մասին ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=193167	
«Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189250	
«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք	Հասանելի է ՀՀ իրավական ակտերի տեղեկատվական համակարգում՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=190370	
ՀՀ ՏԿԵՆ հեռավար ուսուցման համակարգում զետեղված դասընթաց	https://elearning.mta.gov.am/course/view.php?id=37	
ՀՀ ՏԿԵՆ կայք էջում զետեղված նյութեր	https://mtad.am/pages/publicity-transparency-local-self-governance-including-sessions-community-councils	

Norwegian Ministry
of Foreign Affairs

ՀՀ տարածքային կառավարման եւ
ենթակառուցվածքների նախարարություն

UNDP

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

«Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ, Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ: